**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/20-1**

ք. Հրազդան 04 հունվ. 2025թ.

**Հրազդանի համայնքապետարանը,** ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Օ.Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 *Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված* ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 4 ամսվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) *Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային* փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում,

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների կատարումը ամբողջ ծավալով կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երեք տարի՝ 1-ին չափաբաժնի համար և մեկ տարի՝ 2-րդ չափաբաժնի համար: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով

տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 13.389.000 (տասներեք միլիոն երեք հարյուր ութսունինը հազար) ՀՀ դրամ, որից 2.231.500 (երկու միլիոն երկու հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 2 | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 3 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի դստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող *է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն* է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների

որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| **Հրազդանի համայնքապետարան** | **«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ** |
| ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 | ք. Հրազդան, Քաղսի 4 թղմ., 88. |
| վարչական շենք | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ |
| Հրազդանի ՏԳԲ | Հ/Հ՝ 163158050159 |
| Հ/Հ 900122001556 | ՀՎՀՀ՝ 03022928 |
| ՀՎՀՀ 03027114 | |
| **Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ** | **Օ.ԱՎԱԳՅԱՆ** |
| /ստորագրություն/Կ.Տ | /ստորագրություն/Կ.Տ |

Հավելված N 1
2025թ. կնքված
«ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/20-1» ծածկագրով պայմանագրի

# ՀՐԱԶԴԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂՍԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ և ՀԱՐԴԱՐՄԱՆ, ՆՈՐ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԱԹԵՐԹԸ

| Հ/հ | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ/մ | Քանակը | Միավորի արժեքը | Ընդհանուրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **I. Համաշինարարական աշխատանքներ** | | | | |
| | **1. Քանդման աշխատանքներ** | | | | |
| 1 | Թեթև բետոնե բլոկներից միջնապատերի քանդում d=150մմ (10.4մ²) | մ³ | 1,56 | 14 918,65 | 23 273,10 |
| 2 | Բետոնե և խճանկար հատակների քանդում, ներառյալ ենթաշերտերը (267մ²) | մ³ | 26,70 | 29 881,42 | 797 833,96 |
| 3 | 240սմ հաստությամբ միջնապատում բացվածքի բացում դռան համար (2.1մ²) | մ³ | 0,50 | 122 001,28 | 61 488,64 |
| 4 | Շինաղբի մաքրում, դուրս բերում շենքից և բարձում ա/ինքնաթափի վրա (28.8մ³) | տ | 52,00 | 3 737,36 | 194 342,76 |
| 5 | Շինաղբի տեղափոխում 3կմ | տ | 52,00 | 1 976,68 | 102 787,39 |
| | **Ընդամենը 1՝** | | | | **1 179 725,85** |
| | **2. Միջնորմներ** | | | | |
| 1 | Միջնորմների շարվածք թեթև բետոնե բլոկներից 400x200x100մմ (43.8մ²) | մ³ | 4,38 | 47 739,69 | 209 099,82 |
| 2 | Շարվածքի ամրանավորում | տ | 0,11 | 115 222,15 | 12 674,44 |
| 3 | Ամրան AcI դասի (Φ8) | տ | 0,04 | 496 355,46 | 18 365,15 |
| 4 | Ամրան A500C դասի (Φ10) | տ | 0,07 | 632 801,43 | 46 194,50 |
| 5 | Ամրանավորված անցքերի լցափակում մանրախիճ բետոնով B12.5 դասի | մ³ | 0,31 | 50 942,63 | 15 792,21 |
| 6 | Հերմետիկ առաձգական ներդիրներ փրփրապլաստից d=20մմ | մ² | 4,73 | 880,17 | 4 163,23 |
| 7 | Միաձույլ ե/բ բարավորներ B15 դասի բետոնից (3.2գծմ) | մ³ | 0,06 | 119 940,86 | 7 676,22 |
| 8 | Ամրան AcI դասի (Φ6) | կգ | 1,20 | 496,67 | 596,00 |
| 9 | Ամրան A500C դասի (Φ12) | կգ | 5,80 | 577,31 | 3 348,38 |
| | **Ընդամենը 2՝** | | | | **317 909,95** |
| | **3. Բացվածքի փակում** | | | | |
| 1 | 450մմ հաստությամբ պատում բացվածքի փակում թեթև բետոնե բլոկներով 300մմ և 150մմ (3.2մ²) | մ³ | 1,44 | 47 908,30 | 68 987,95 |
| | **Ընդամենը 3՝** | | | | **68 987,95** |
| | **4. Տանիք** | | | | |
| 1 | Ջերմամեկուսացում H=140մմ հանքային բամբակե սալերով | մ² | 53,00 | 4 147,94 | 219 840,75 |
| 2 | Ջրամեկուսացում 2 շերտ իզոգամով | մ² | 53,00 | 5 932,71 | 314 433,70 |
| 3 | Հենարաններ B15 դասի բետոնից քայքայված հատվածներում | մ³ | 1,30 | 76 703,64 | 99 714,73 |
| 4 | Փայտե կավարամածի և տախտակամածի մշակում հականեխիչ և հակահրդեհային քսուքով | մ² | 53,00 | 716,18 | 37 957,72 |
| 5 | Ջրհորդաններ հարթ ցինկապատ փոշեներկված թիթեղից d=0.6մմ | մ | 23,00 | 9 687,41 | 222 810,45 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Ջրհորդանի խողովակ ցինկապատ փոշեներկված թիթեղից | մ | 8,60 | 8 475,61 | 72 890,29 |
| 7 | Ջրհորդանի ճագար ցինկապատ փոշեներկված թիթեղից | հատ | 2,00 | 4 584,32 | 9 168,65 |
| | **Ընդամենը 4՝** | | | | **976 816,29** |
| | **5. Հատակներ** | | | | |
| 1 | Նախաշերտ H=80մմ B15 դասի բետոնից (267մ²) | մ³ | 21,36 | 60 929,90 | 1 301 462,77 |
| 2 | Նախաշերտի ամրանավորում ցանցով | տ | 0,33 | 33 413,02 | 11 093,12 |
| 3 | Φ4BpI(150x150)մմ ամրանացանցի արժեքը (1մ²՝ 1.24կգ) | մ² | 267,00 | 531,49 | 141 907,48 |
| 4 | Ջրամեկուսացում քսուքային բիտումով 2 շերտ H=3մմ | մ² | 267,00 | 2 879,81 | 768 909,39 |
| 5 | Ցեմենտավազե շաղախից հարթաշերտ H=40մմ | մ² | 267,00 | 2 849,49 | 760 813,45 |
| 6 | Հատակների երեսպատում մամլագրանիտե սալերով, սոսնձով | մ² | 258,80 | 14 164,57 | 3 665 789,62 |
| 7 | Շրիշակներ մամլագրանիտե սալերից H=90մմ (76.2գծմ) | մ² | 6,90 | 16 055,68 | 110 784,17 |
| 8 | Հատակների երեսպատում խեցեսալերով, սոսնձով | մ² | 8,20 | 12 496,79 | 102 473,69 |
| | **Ընդամենը 5՝** | | | | **6 863 233,70** |
| | **6. Մետաղապլաստե պատուհան** | | | | |
| 1 | Մետաղապլաստե բլոկով, 60մմ հաստությամբ, 4+4մմ ապակեփաթեթով պատուհան, ներառյալ սարքերը, բացվող | մ² | 1,39 | 38 810,41 | 53 946,47 |
| 2 | Պլաստմասսայե պատուհանագոգի տեղադրում 35սմ լայնությամբ L=26.8գծմ | մ² | 9,38 | 5 641,30 | 52 915,40 |
| 3 | Պլաստմասսայե պատուհանագոգի արժեքը | մ | 26,80 | 4 710,09 | 126 230,40 |
| 4 | Հակամիջատային ցանցի տեղադրում 1.4x0.75մ (գոյություն ունեցող պատուհանների վրա) | հատ | 3,00 | 24 085,90 | 72 257,70 |
| | **Ընդամենը 6՝** | | | | **305 349,97** |
| | **7. Մետաղապլաստե ներքին դռներ** | | | | |
| 1 | Մետաղապլաստե, 60մմ հաստությամբ խուլ ներքին դռներ, ներառյալ սարքերը (5 հատ) | մ² | 9,07 | 48 171,80 | 436 918,20 |
| 2 | Մետաղապլաստե, 60մմ հաստությամբ, ապակեպատ ներքին դուռ, ներառյալ սարքերը (1 հատ) | մ² | 2,04 | 50 853,36 | 103 740,86 |
| | **Ընդամենը 7՝** | | | | **540 659,06** |
| | **8. Արտաքին դռներ (2 հատ)** | | | | |
| 1 | Ալյումինե բլոկով, 60մմ հաստությամբ, ջերմակամրջակով, ապակեփաթեթով 4+4մմ արտաքին դուռ, ներառյալ սարքերը (1 հատ) | մ² | 3,68 | 154 149,75 | 567 271,08 |
| 2 | Արտաքին մետաղական դռան մոնտաժում | մ² | 2,04 | 11 934,50 | 24 346,38 |
| 3 | Արտաքին, ջերմամեկուսացված, ապակեպատ դռան արժեքը, ներառյալ սարքերը (1 հատ) | մ² | 2,04 | 128 290,37 | 261 712,36 |
| | **Ընդամենը 8՝** | | | | **853 329,83** |
| | **9. Ներքին հարդարման աշխատանքներ** | | | | |
| 1 | Պատերի մաքրում, նախապատրաստում ներկման | մ² | 183,80 | 2 042,35 | 375 383,53 |
| 2 | Նույնը, թեքությունների | մ² | 8,70 | 2 042,35 | 17 768,43 |
| 3 | Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտավազե շաղախով | մ² | 137,80 | 4 746,94 | 654 128,77 |
| 4 | Նույնը, թեքությունների | մ² | 7,60 | 7 087,03 | 53 861,43 |
| 5 | Պատերի և թեքությունների բարձրորակ ներկում լատեքսային ներկով | մ² | 239,10 | 2 780,54 | 664 827,57 |
| 6 | Պատերի երեսպատում հախճասալով H=1.8մ | մ² | 78,60 | 12 585,17 | 989 194,60 |
| 7 | Առաստաղների բարձրորակ սվաղ գաջե շաղախով, | մ² | 232,20 | 6 382,19 | 1 481 945,26 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով | մ² | 224,00 | 3 289,06 | 736 748,37 |
| 9 | Կախովի առաստաղ շերտավոր պլաստմասսայից, հիմնակմախքի պատրաստմամբ | մ² | 43,20 | 11 074,17 | 478 404,05 |
| | **Ընդամենը 9՝** | | | | **5 452 262,01** |
| | **10. Արտաքին հարդարման աշխատանքներ** | | | | |
| 1 | Պատերի ցեմենտավազե սվաղ լարացանցի տեղադրմամբ | մ² | 68,40 | 5 472,40 | 374 312,15 |
| 2 | Սվաղված հատվածի նախաներկում և ներկում բարձրորակ ճակատային ներկով | մ² | 68,40 | 1 645,90 | 112 579,65 |
| 3 | Արտաքին պատուհանագոգ d=25մմ բազալտե սալերից (7.4գծմ), եզրերի մշակմամբ | մ² | 1,11 | 24 434,69 | 27 122,50 |
| 4 | Կախովի առաստաղ շերտավոր պլաստմասսայից, փայտե ֆակտուրայով, հիմնակմախքի պատրաստմամբ | մ² | 19,80 | 11 074,17 | 219 268,52 |
| | **Ընդամենը 10՝** | | | | **733 282,82** |
| | **11. Սալվածք, հարթակ** | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ H=10սմ | մ² | 28,80 | 1 252,51 | 36 072,32 |
| 2 | Շերտ H=10սմ B15 դասի բետոնից | մ³ | 2,88 | 60 929,90 | 175 478,13 |
| 3 | Բետոնե շերտի ամրանավորում | տ | 0,04 | 33 413,02 | 1 202,87 |
| 4 | Φ4Bpl(150x150)մմ ամրանացանցի արժեքը (1մ²՝ 1.24կգ) | մ² | 28,80 | 531,49 | 15 306,87 |
| 5 | Սալվածքի և հաթակի երեսպատում բազալտե սալերով d=40մմ | մ² | 28,80 | 22 294,33 | 642 076,57 |
| 6 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30(H)սմ B15 դասի բետոնե հիմքով (1գծմ՝ 0.06մ³) | մ | 28,80 | 16 148,63 | 465 080,47 |
| | **Ընդամենը 11՝** | | | | **1 335 217,23** |
| | **Ընդամենը I՝** | | | | **18 626 774,64** |
| | **II. Սառը ջրի ջրամատակարարման ցանց** | | | | |
| 1 | Լվացարանի ծորակ-խառնիչ | կ-տ | 4,00 | 13 032,47 | 52 129,90 |
| 2 | Ճկուն փողրակ լվացարանի ջրամիացման համար 1/2" | հատ | 4,00 | 2 927,57 | 11 710,27 |
| 3 | Ճկուն փողրակ զուգարանակոնքի ջրամիացման համար 1/2" | հատ | 2,00 | 2 927,57 | 5 855,13 |
| 4 | Բրոնզե փական պարուրակավոր Φ20 PN10 | հատ | 4,00 | 8 283,90 | 33 135,59 |
| 5 | Պոլիէթիլենե խողովակ խմելու ջրի համար Φ20x3մմ PN16 | մ | 13,00 | 4 705,50 | 61 171,49 |
| 6 | Պոլիէթիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20մմ | հատ | 40,00 | 733,09 | 29 323,51 |
| 7 | Խողովակների մեկուսացում $Φ_{ներք}$=25մմ | մ | 15,00 | 945,19 | 14 177,78 |
| 8 | Գնդիկավոր փական 0.5′"F | հատ | 4,00 | 7 184,26 | 28 737,06 |
| 9 | Ծավալային էլեկտրաջրատաքացուցիչV=100լ | հատ | 1,00 | 138 783,35 | 138 783,35 |
| | **Ընդամենը II՝** | | | | **375 024,08** |
| | **III. Տաք ջրի ջրամատակարարման ցանց** | | | | |
| 1 | Ճկուն փողրակ լվացարանի ջրամիացման համար 1/2" | հատ | 4,00 | 2 927,57 | 11 710,27 |
| 2 | Բրոնզե փական պարուրակավոր Φ20 PN10 | հատ | 3,00 | 8 283,90 | 24 851,69 |
| 3 | Պոլիէթիլենե խողովակ խմելու ջրի համար Φ20x3մմ PN16 | մ | 9,00 | 4 705,50 | 42 349,49 |
| 4 | Պոլիէթիլենե խողովակների ձևավոր մասեր | հատ | 30,00 | 733,09 | 21 992,64 |
| 5 | Խողովակների մեկուսացում $Φ_{ներք}$=25մմ | մ | 12,00 | 945,19 | 11 342,23 |
| 6 | Գնդիկավոր փական 0.5′"F | հատ | 4,00 | 7 184,26 | 28 737,06 |
| 7 | Պատյան պողպատե խողովակից $D_H$=127x3մմ | մ | 5,00 | 9 018,47 | 45 092,35 |
| | **Ընդամենը III՝** | | | | **186 075,72** |
| | **IV. Կոյուղու ներքին ցանց** | | | | |
| | | | | | 108 001,94 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Ավազի նախաշերտ H=10սմ | մ³ | 1,20 | 7 496,83 | 8 996,19 |
| 3 | Պաշտպանիչ շերտ ավազից | մ³ | 2,40 | 7 496,83 | 17 992,39 |
| 4 | Գրունտի հետլիցք ձեռքով, տոփանմամբ | մ³ | 10,70 | 2 187,91 | 23 410,67 |
| 5 | Ավելորդ գրունտի հարթեցում տեղում | մ³ | 3,60 | 2 413,71 | 8 689,36 |
| 6 | Կոյուղու ոչ ճնշումային պվք խողովակ խրամուղում DN110 (Φ110x2.8մմ) | մ | 12,00 | 2 459,84 | 29 518,09 |
| 7 | Նույնը, հատակով և պատերով (Φ110x2.8մմ) | մ | 15,00 | 3 477,79 | 52 166,90 |
| 8 | Կոյուղու ոչ ճնշումային պվք խողովակ DN50 (Φ50x2.5մմ) | մ | 8,00 | 2 443,38 | 19 547,06 |
| 9 | Լոգարանային լվացարան սիֆոնով | կ-տ | 2,00 | 30 741,59 | 61 483,18 |
| 10 | Խոհանոցային լվացարան սիֆոնով | կ-տ | 2,00 | 36 239,75 | 72 479,50 |
| 11 | Զուգարանակոնք ջրահեռացման ծալքավոր անկյունակով | հատ | 2,00 | 68 772,06 | 137 544,11 |
| 12 | Պվք մաքրիչ DN100 | կ-տ | 1,00 | 4 253,05 | 4 253,05 |
| 13 | Պվք մաքրիչ DN50 | կ-տ | 2,00 | 3 410,00 | 6 820,01 |
| 14 | Պվք ստուգիչ-մաքրիչ DN110 | հատ | 1,00 | 4 253,05 | 4 253,05 |
| 15 | Պվք եռաբաշխիչ DN110, a=90⁰ | հատ | 3,00 | 1 136,29 | 3 408,86 |
| 16 | Պվք եռաբաշխիչ DN110/50/110, a=90⁰ | հատ | 4,00 | 824,72 | 3 298,90 |
| 17 | Պվք եռաբաշխիչ DN50, a=90⁰ | հատ | 4,00 | 403,20 | 1 612,79 |
| 18 | Պվք եռաբաշխիչ DN110, a=45⁰ | հատ | 1,00 | 989,67 | 989,67 |
| 19 | Պվք անկյունակ DN110, a=90⁰ | հատ | 1,00 | 769,74 | 769,74 |
| 20 | Պվք անկյունակ DN50, a=90⁰ | հատ | 2,00 | 219,93 | 439,85 |
| 21 | Պվք անկյունակ DN110, a=45⁰ | հատ | 2,00 | 201,60 | 403,20 |
| 22 | Հոսակ DN100 | հատ | 1,00 | 19 251,93 | 19 251,93 |
| | **Ընդամենը IV՝** | | | | **585 330,45** |
| | **V. Օդափոխության համակարգ** | | | | |
| 1 | BP-2000, L=1600մ³/ժ կենտրոնախույս օդամուղ | կ-տ | 1,00 | 257 261,81 | 257 261,81 |
| 2 | Օդամուղի ինվեկտորային պտուտաթվերի կարգավորիչ | կ-տ | 1,00 | 12 360,00 | 12 360,00 |
| 3 | Ճկուն միացում Φ315 | կ-տ | 1,00 | 27 182,52 | 27 182,52 |
| 4 | Ճկուն միացում 270x160 | կ-տ | 1,00 | 20 768,00 | 20 768,00 |
| 5 | Օդամուղի արտաքին հենարան 40x40x4մմ անկյունակից (5գծմ) | կգ | 12,10 | 812,64 | 9 832,90 |
| 6 | Հովանոց 5 ելքով 300x250 (4400x650)մմ | հատ | 1,00 | 623 874,78 | 623 874,78 |
| 7 | Գլխանոց 250x150 | հատ | 1,00 | 11 878,40 | 11 878,40 |
| 8 | Օդատար d=0.7մմ ցինկապատ թիթեղից | մ² | 11,00 | 10 669,80 | 117 367,85 |
| 9 | Օդափոխության ճաղաշար 200x200 | հատ | 1,00 | 6 822,51 | 6 822,51 |
| | **Ընդամենը V՝** | | | | **1 087 348,76** |
| | **VI. Էլեկտրալուսավորություն և էլեկտրաուժային սարքավորումներ** | | | | |
| 1 | Մետաղական կախովի էլ.վահան 500x400x200մմ (IP54) | հատ | 1,00 | 67 525,57 | 67 525,57 |
| 2 | Ավտոմատ անջատիչ միաֆազ, մոդուլային, 63Ա | հատ | 1,00 | 6 552,18 | 6 552,18 |
| 3 | Նույնը, 25Ա | հատ | 1,00 | 5 278,35 | 5 278,35 |
| 4 | Նույնը, 10Ա | հատ | 2,00 | 5 278,35 | 10 556,71 |
| 5 | Նույնը, 6Ա | հատ | 2,00 | 5 589,92 | 11 179,83 |
| 6 | Ավտոմատ դիֆերենցիալ անջատիչ (IP+N) 32Ա, DY30mA | հատ | 2,00 | 19 747,06 | 39 494,12 |
| 7 | Միաֆազ կոնտակտորն 220Վ, 10Ա | հատ | 1,00 | 5 089,71 | 5 089,71 |
| 8 | Էլ.վարդակ երկբևեռ, միաֆազ, հերմետիկ, հողանցման հպակով, պատի մեջ, 16Ա | հատ | 9,00 | 3 595,57 | 32 360,12 |
| 9 | Էլ.լուսավորության մեկստեղնանի անջատիչ հերմետիկ, պատի մեջ, 10Ա | հատ | 4,00 | 3 964,82 | 15 859,27 |
| 10 | Էլ.լուսավորության երկստեղնանի անջատիչ | հատ | 1,00 | 4 624,60 | 4 624,60 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Էլ.լուսավորության փոխարկիչ հերմետիկ, պատի մեջ, 10Ա | հատ | 6,00 | 2 921,40 | 17 528,39 |
| 12 | Ճյուղավորման տուփ պլաստմասսայե 50x50x30մմ | հատ | 11,00 | 329,89 | 3 628,78 |
| 13 | Առաստաղի լուսատու լուսադիոդային 36W, 2700K | հատ | 31,00 | 25 859,88 | 801 656,39 |
| 14 | Առաստաղի լուսատու լուսադիոդային, կետային 7W, 3000K (IP65) | հատ | 6,00 | 7 827,78 | 46 966,69 |
| 15 | Դրսի լուսատու լուսադիոդային 11W, 3000K (IP65) | հատ | 1,00 | 10 822,85 | 10 822,85 |
| 16 | Սանհանգույցի լուսատու լուսադիոդային 7W, 3000K (IP65) | հատ | 3,00 | 5 995,06 | 17 985,19 |
| 17 | Կոճակային անջատիչ 2 կոճակով 10Ա | հատ | 1,00 | 6 883,50 | 6 883,50 |
| 18 | Ուժային մալուխ ՎՎԳ$_{ng}$-0.66 3x4մմ$^2$ | մ | 45,00 | 3 598,96 | 161 953,31 |
| 19 | Նույնը,ՎՎԳ$_{ng}$-0.66 3x2.5մմ$^2$ | մ | 72,00 | 2 814,33 | 202 631,70 |
| 20 | Նույնը,ՎՎԳ$_{ng}$-0.66 3x1.5մմ$^2$ | մ | 330,00 | 2 533,92 | 836 194,60 |
| 21 | Պլաստմասսայե ալիքավոր խողովակ Φ18մմ | մ | 10,00 | 1 453,86 | 14 538,58 |
| | **Էլ.սարքավորումներ** | | | | |
| 22 | Սառցարան 300լ | հատ | 1,00 | 577 802,69 | 577 802,69 |
| 23 | Գազօջախ տակդիրով | հատ | 1,00 | 185 400,00 | 185 400,00 |
| | **Հողանցման կոնտուր** | | | | |
| 24 | Հողանցման էլեկտրոդներ պողպատե անկյունակից 50x50x5մմ (L=2.5մ) | հատ | 3,00 | 7 003,73 | 21 011,19 |
| 25 | Հողանցման պողպատաշերտ 40x4մմ | մ | 10,00 | 1 190,05 | 11 900,51 |
| 26 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտում և հետլիցք տոփանմամբ | մ$^3$ | 2,10 | 9 732,71 | 20 438,69 |
| | **Ընդամենը VI՝** | | | | **3 135 863,53** |
| | **Ընդհանուրը՝** | | | | **23 996 417,18** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Հրազդանի համայնքապետարան**
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001556
ՀՎՀՀ 03027114

_____ Ն.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ**
ք. Հրազդան, Քաղսի 4 թղմ., 88.
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163158050159
ՀՎՀՀ՝ 03022928

_____ Օ.ԱՎԱԳՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված թիվ 2
04 հունվար 2025թ.կնքված
«ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/20-1» ծածկագրով պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Հրազդան խոշորացված համայնքի Քաղսի բնակավայրի 2-րդ թաղամասի թիվ 15 հասցեում գտնվող շինության ընթացիկ նորոգման և հարդարման, նոր սանհանգույցի կառուցման աշխատանքներ | Վերանորոգման աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրը | 4 ամսվա ընթացում: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Հրազդանի համայնքապետարան**
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001556
ՀՎՀՀ 03027114

_____ Մ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ**
ք. Հրազդան, Քաղսի 4 թղմ., 88.
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163158050159
ՀՎՀՀ՝ 03022928

_____ Օ.ԱՎԱԳՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 3
04 հունիսի 2025թ.կնքված
«ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/20-1» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով ախատեսված ատփաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20- թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | |
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 1 | 45461100 | Հրազդան խոշորացված համայնքի Քաղսի բնակավայրի 2-րդ թաղամասի թիվ 15 հասցեում գտնվող շինության ընթացիկ նորոգման և հարդարման, նոր սանհանգույցի կառուցման աշխատանքներ | | | | | | | | | |

*ման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն նակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: ավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Հրազդանի համայնքապետարան**
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001556
ՀՎՀՀ 03027114

_____ **Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**
/ստորագրություն/Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ**
ք. Հրազդան, Քաղսի 4 թղմ., 88.
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163158050159
ՀՎՀՀ՝ 03022928

_____ **Օ.ԱՎԱԳՅԱՆ**
/ստորագրություն/Կ.Տ